Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
ապրիլի 23 - ի N 584 - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԱՂԵՏՆԵՐԻ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ

I. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

1. Արտակարգ իրավիճակներն ուղեկցվում են մարդկանց առողջությանը սպառնացող վտանգներով, որոնց վերացման անհրաժեշտությունը պահանջում է բժշկական օգնության ցուցաբերում որպես պետության պարտականությունը քաղաքացիների նկատմամբ: Արտակարգ իրավիճակների բազմազանությունը և բժշկական հետևանքների նշանակալից հնարավոր մասշտաբները թելադրում են դրանց նախազգուշացման և վերացման համար մշտապես պատրաստ պահել հատուկ տիպի բժշկասոցիալական համակարգերը՝ աղետների բժշկության ազգային համակարգը:

2. Աղետների բժշկությունը բժշկագիտության այն բնագավառն է, որն ուսումնասիրում է արտակարգ իրավիճակների տեխնածին վթարների և անտրոպոգեն կոնֆլիկտների բժշկասոցիալական հետևանքները՝ դրանց նախազգուշացման և վերացման համար անհրաժեշտ սկզբունքներ մշակելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության տարածքում բնածին և տեխնածին աղետները ազգային անվտանգությանը սպառնացող գործոններ են:

3. Տարածաշրջանում վտանգավոր երկրաբանական, մթնոլորտային երևույթների, ինչպես նաև տեխնածին (Հայկական ատոմային էլեկտրակայանի, բազմաթիվ հիդեհավտանգ արտադրամասերի առկայությունը) աղետների հնարավոր դրսևորումները կարող

են հանգեցնել աղետային իրավիճակների, ինչի հետևանքով հնարավոր են մարդկանց առողջության վտանգում, սանիտարահիգիենիկ, էպիդեմիոլոգիական արտակարգ իրավիճակների առաջացում: Այդ պատճառով մարդկանց առողջությանը սպառնացող վտանգները, ինչպես նաև արագ և որակյալ բժշկական օգնություն ցուցաբերելու, սանիտարաէպիդեմիոլոգիական իրավիճակները կառավարելի և նրանց հետևանքները շուտափույթ վերացնելու համար աղետների բժշկության համակարգում իր անգնահատելի դերն ունի աղետների բժշկության կենտրոնը, որը կհանդիսանա տարածաշրջանային կենտրոն: Այն կլինի խորհրդատվական, հոգեբանախորհրդատվական, վերլուծական-տեղեկատվական, արագ արձագանքման և իրազեկման, ուսումնական, ինչպես նաև ախտորոշիչ-լաբորատոր և ժամանակակից տեխնոլոգիաներով և կապի միջոցներով հագեցված կենտրոն: Հետագայում հնարավոր է կենտրոնի գործունեության ընդլայնում:

Կենտրոնի ստեղծումը բխում է ազգային անվտանգության ռազմավարությունից և Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների բնագավառներում իրականացվող քաղաքականությունից:

4. Ծրագրի հիմնական նպատակը հանրապետությունում աղետների բժշկության համակարգի ստեղծումը և հետագա զարգացումն է:

II. ԱՂԵՏՆԵՐԻ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

5. Աղետների բժշկության կենտրոնը հնարավորություն է ստեղծում արտակարգ իրավիճակներում բնակչության արագ տեղեկացման ու ազդարարման համար, որն էլ իր հերթին ապահովում է բնակչության պատրաստությունը դիմագրավելու համար սպառնացող վտանգները: Այլ կերպ ստեղծվում է բնակչության քաղաքացիական պաշտպանության նախաձեռնող խմբի ստեղծման հնարավորություն:

6. Աղետների բժշկության կենտրոնի գործունեության առարկան և նպատակներն են՝

1) արտակարգ իրավիճակների նախարարության աղետների բժշկության վերլուծական-համակարգման և տեղեկատվական միասնական գիտավերլուծական կենտրոնի ստեղծում՝ օգտագործելով և ընդգրկելով գիտատեսական ու գիտագործնական ներուժը բնակչության պաշտպանության և աղետների կանխման համար.

2) աղետների բժշկության գիտամեթոդական սկզբունքների մշակումը.

3) հնարավոր աղետների պատճառ հանդիսացող աղբյուրների հայտնաբերումը, ուսումնասիրումը և դրանց նկատմամբ մշտական հսկողության կազմակերպումը.

4) աղետների բժշկասանիտարական հետևանքների ուսումնասիրումը և կանխատեսումը.

5) աղետների բժշկագիտության մեթոդական ձեռնարկների ստեղծումը, հրապարակումը և բնակչությանն առաջին բուժօգնության հիմքերի ուսուցման կազմակերպումն ու անցկացումը.

6) բուժօգնության ցուցաբերման և արտակարգ իրավիճակների, արհավիրքների, կոնֆլիկտների տարածքից տուժածների բժշկական տարահանման միջոցառումների կառավարման օպերատիվ, կազմակերպական և ռազմավարական հիմունքների մշակումը.

7) բժշկական բնույթի տեղեկատվության հավաքումը, մշակումը, փոխանակումը և ներդրումը բնակչության պաշտպանության շրջանում և այն տարածքներում, որտեղ արտակարգ իրավիճակային պայմաններ են.

8) աղետների բժշկության ծառայողների, անձնակազմի պատրաստումը, պատրաստակամության բարձր աստիճանի պահպանումը.

9) միասնական պետական քաղաքականության սահմաններում հնարավոր աղետների բժշկասանիտարական հետևանքների նախազգուշացումների տեղայնացմանն ու վերացմանն ուղղված միջոցառումների անցկացումը.

10) արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման համար ընդգրկված անձնակազմի առողջության պահպանումը և բուժօգնության ցուցաբերումը.

11) հոգեբանական վերականգնողական նպատակային գործունեության կազմակերպումը.

12) աղետների բժշկագիտության զարգացման և կատարելագործման ուղղությամբ գիտահետազոտական աշխատանքների իրականացումը.

13) աղետների բժշկության համակարգի բժշկական մասնագետների պատրաստումը և վերապատրաստումը.

14) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ամբողջ անձնակազմի և նրանց ընտանիքի անդամների ստացիոնար բուժման, հետազոտման և ուղեգրման աշխատանքների կազմակերպումը.

15) փրկարար ծառայողների պարտադիր բժշկական հետազոտության իրականացումը և նրանց առողջական վիճակի մասին համապատասխան բժշկական եզրակացության տրամադրումը ծառայության աշխատակազմին.

16) սեմինարների, վարժանքների ու դասընթացների միջոցով բժիշկների մասնագիտական մակարդակի բարձրացումը։

III. ԱՂԵՏՆԵՐԻ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Աղետների բժշկության կենտրոնի բժշկագիտության հիմնական ուղղություններն են՝

1) հնարավոր աղետների բժշկասանիտարական հետևանքների ուսումնասիրումը և օպերատիվ կանխատեսման մեթոդների հիմնավորումը.

2) աղետների բժշկասանիտարական հետևանքների վերացման անհրաժեշտ ուժերի և միջոցների պահանջների հիմնավորումը։ Առաջինն արտակարգ իրավիճակի տարածք ժամանում են շտապ օգնության և փրկարարների բազայի վրա ստեղծված խմբերը, որոնք գնահատում են աղետի մասշտաբներն ու տեսակը, տեղեկատվությունը

հաղորդում են կենտրոն՝ աղետի ծավալի որոշման և լրիվ մասշտաբով բուժօգնություն կազմակերպելու համար.

3) աղետների ժամանակ բժշկասանիտարական ապահովման կազմակերպման օպտիմալ տարբերակի հիմնավորումը: Կարևորագույն խնդիր է բուժօգնության ցուցաբերման և արտակարգ իրավիճակների, արհավիրքների, կոնֆլիկտների տարածքից տուժածների բժշկական տարահանման միջոցառումների կառավարման օպերատիվ, կազմակերպական և ռազմավարական հիմունքների մշակումը: Հատուկ նշանակություն պետք է տրվի ռազմավարական պլանավորմանը՝ հիմնված արտակարգ իրավիճակների հնարավոր մասշտաբների ու տեղանքի կանխատեսման և տուժածների խմբերի տարահանման երթուղայնացման և նրանց բուժհաստատություններ հասցնելու խնդիրների լուծման վրա.

4) աղետների բժշկագիտության գիտական, կազմակերպչական, մեթոդական հիմքերի և նրանց պատրաստվածության աստիճանի բարձրացման մշակումը: Աղետների բժշկության ծառայության ուժերի և միջոցների բավարար ապահովվածությունը բխում է բնակչության սանիտարական կորուստների կանխորոշման վատթարագույն տարբերակների և տարածքի առողջապահության իրական հնարավորությունների գիտահիմնավորված մեծությունից: Բժշկական ուժերի և միջոցների պահանջարկի և արտակարգ բուժօգնության ծավալի չափի որոշման համար անհրաժեշտ է համեմատաբար ճշգրիտ տեղեկատվություն ունենալ՝ աղետի մասշտաբների, ախտահարող գործոնի բնույթի, տուժածների կողմնորոշիչ թվի, հաղորդման և տարահանման ճանապարհների հասանելիության վերաբերյալ.

5) աղետների բժշկագիտության կառուցվածքային կազմակերպման, վարչարարության մեթոդների և կատարելագործման հիմքերի մշակումը.

6) առողջապահական համակարգի աշխատողներին հետբուհական աղետների բժշկության հիմունքների ուսուցման, վերապատրաստման դասընթացների կազմակերպումն ու անցկացումը՝

ա. Աղետների բժշկության կենտրոնում (քաղ. Երևան),

բ. Հայկական քրիստոնեական բժշկական միության (ԱՔՄԱ) ուսումնական կենտրոնում (քաղ. Ախուրյան),

գ. Հատուկ բժշկական քոլեջում (քաղ. Արթիկ).

7) աղետների բժշկագիտության մեթոդական ձեռնարկների մշակումն ու հրապարակումը.

8) աղետների բժշկագիտության փորձի ուսումնասիրումն ու վերլուծությունը։

IV. ԱՂԵՏՆԵՐԻ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

8. Արտակարգ իրավիճակների բժշկական հետևանքների կանխումը շատ կարևոր, երկարատև, աշխատատար գործընթաց է, որը պահանջում է կենտրոնացված ղեկավարում, մարդկային և նյութական ռեսուրսներ։ Այս գործընթացից է կախված արտակարգ իրավիճակների բժշկական հետևանքների վերացման հետ տարվող աշխատանքները։

Մի շարք եվրոպական երկրներում, այդ թվում՝ նաև Ռուսաստանում, Բելոռուսիայում գործում են աղետների բժշկագիտության կենտրոններ, որոնք իրականացնում են աղետների բժշկության կարևոր գործընթացները։

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ արտակարգ իրավիճակներում բնակչության առողջության ու կյանքի պահպանման համար գլխավոր պայման է բնակչության իրազեկված և աղետին նախապատրաստված լինելը։

9. Բնակչության շրջանում նախապես տեղեկատվական և վերլուծական աշխատանքներ տանելը հանգեցնում է մահացությունների, այս կամ այն ճանապարհով ախտահարվածների, ֆիզիկական և հոգեկան խաթարումների թվի նվազեցմանը։

Բնակչության հետ այդ տեղեկատվական, վերլուծական աշխատանքները մի շարք երկրներում իրականացնում են աղետների բժշկության կենտրոնները։

V. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՂԵՏՆԵՐԻ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

10. Ժամանակակից միջազգային սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքում ստեղծվել է նոր իրավիճակ: Աճող գլոբալիզացիան և ինտեգրացումը հավասարապես տարածվում է նաև արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, մասնավորապես, աղետների բժշկության բնագավառում: Աղետների բժշկությունը, որպես նոր բժշկական ու գիտական ուղղություն, արդեն իսկ լայն շրջանակներ է ընդգրկում աշխարհում, որի կարևորագույն առանձնահատկություններից է միջազգային համագործակցությունը և միջազգային պայմանագրերին համապատասխան գործունեությունը: Դա պայմանավորված է այն անվիճելի կարգախոսով, որ աղետները սահմաններ, ազգություն և դավանանք չեն ճանաչում, աղետները համամարդկային են: Ուստի աղետների հետևանքների վերացման, տուժածների փրկարարավերականգնողական աշխատանքներն ունեն համամարդկային մարդասիրական բնույթ և հրամայական են:

11. Միջազգային ինտեգրացումը ենթադրում է համագործակցությունը երկրների և միջազգային կառույցների միջև: Այս ուղղությամբ ստեղծվող աղետների բժշկության կենտրոնը համագործակցային գործունեության նախնական պայմանավորվածություն ունի հետևյալ կազմակերպությունների հետ՝

1) Հայաստան-ԵՄ գործողությունների ծրագրի շրջանակներում (հումանիտար բնույթի գործողությունների խումբ, 37-րդ կետ).

2) Բժիշկներ առանց սահմանների միության.

3) Ազգային արտակարգ իրավիճակների կառավարման ասոցիացիայի («ՆԵՄԱ») արտակարգ իրավիճակների կառավարման աջակցության (ԵՄԱԿ) համաձայնագրի շրջանակներում.

4)Շվեյցարական «Արձագանք» ծրագրի շրջանակներում.

5) Հայկական քրիստոնեական բժշկական միության (ԱՔՄԱ).

6) Հայաստան-ՆԱՏՕ 2006-2008 թվականների անհատական գործողությունների ծրագրի շրջանակներում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ